

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ  
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆՆԵՐԸ

Ի. ԲԱԼՅԱՆ

Հասարակության սոցիալական կառուցվածքը, որպես առանձին հասկացություն, մասնավորապես գիտական կոմունիզմի կատեգորիա, մինչև 60-ական թթ. սկիզբը գիտական գրականության մեջ համարյա չի օգտագործվել: Սկսած այդ ժամանակներից լույս են տեսել բազմաթիվ հետազոտություններ, ժողովածուներ և հոդվածներ սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի տարբեր հարցերի մասին և այժմ այդ պրոբլեմի վերաբերյալ գոյություն ունի բավականաչափ գրականություն: Սակայն նշված պրոբլեմի ոչ բոլոր կողմերն են անհրաժեշտ մակարդակով ուսումնասիրված, հատկապես «սոցիալական կառուցվածք» հասկացության չափանիշները, սոցիալ-դասակարգային տարբերություններից անդասակարգ հասարակության, դեպի սոցիալական միաստուտություն անցնելու ուղիներն ու օրինաչափությունները էլ ավելի խորը վերլուծության կարիք են զգում: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքը շարժուն, անընդհատ զարգացման մեջ գտնվող պրոցես է: Սոցիալիստական հասարակության առաջընթացի հետ միասին աստիճանաբար վերացվում են սոցիալ-դասակարգային տարբերությունները քաղաքի և գյուղի, մտավոր և ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունները: Զարգացած սոցիալիզմի պայմաններում այս հարցերը հանդիսանում են կուսակցության և պետության սոցիալական քաղաքականության գլխավոր օղակներից մեկը: ՍՄԿԿ XXVI համագումարում նշվեց, որ «70-ական թվականներին շարունակվում էր սովետական հասարակության բոլոր դասակարգերի ու սոցիալական խմբերի մերձեցումը: Դա օբյեկտիվ, բայց բնավ էլ ոչ տարերային պրոցես է: Դրանում կարևոր դեր է խաղում կուսակցության և պետության սոցիալական քաղաքականությունը: Մեր նպատակն է ստեղծել մի հասարակություն, որի մեջ չի լինի մարդկանց բաժանում դասակարգերի: Եվ կարելի է որոշակիորեն ասել. մենք աստիճանաբար, բայց վստահորեն առաջ ենք ընթանում դեպի այդ մեծ նպատակը»<sup>1</sup>:

Հասարակության սոցիալական կառուցվածքը մարքսիստական գրականության մեջ օգտագործվում է առավել ընդհանրական ձևով՝ որպես սոցիոլոգիական կատեգորիա, որի տակ հասկացվում է սոցիալական համակարգի բոլոր տարրերի փոխպայմանավորված կապերի մեխանիզմ: Սոցիալական կառուցվածքի մեջ արտահայտվում են տվյալ հասարակությանը յուրահատուկ

<sup>1</sup> ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը, Եր., 1981, էջ 84:

աշխատանքի բաժանումը, դասակարգերի և սոցիալական խմբերի փոխհարաբերությունները, սոցիալական հաստատությունների գործունեության բնույթը, հասարակության սոցիալական կազմակերպման և սոցիալական գործողության ձևերը: «Վերցրեք արտադրության ու սպառման զարգացման մի որոշակի աստիճան,— գրում է Մարքսը,— և դուք կստանաք որոշակի հասարակարգ, ընտանիք, դասերի կամ դասակարգերի որոշակի կազմակերպություն, մի խոսքով՝ որոշակի քաղաքացիական հասարակություն: Վերցրեք որոշակի քաղաքացիական հասարակություն, և դուք կստանանք որոշակի քաղաքական կարգ, որը քաղաքացիական հասարակության սոսկ պաշտոնական արտահայտությունն է»<sup>2</sup>:

Հասարակության սոցիալական կառուցվածքը Մարքսը դիտում էր որպես տվյալ հասարակությանը կամ նրա զարգացման որոշակի էտապին յուրահատուկ սոցիալական ընդհանրությունների համակարգ, դասակարգերի կազմակերպություն, որի հիմքը կազմում է արտադրության գոյություն ունեցող եղանակը: Հասարակության սոցիալական կառուցվածքը դիտելով որպես ընդհանուր սոցիոլոգիական կատեգորիա՝ Յու. Լևադան առաջարկում է սոցիալական կառուցվածքի ուսումնասիրությունը երեք պլանով: Նախ՝ ֆունկցիոնալ՝ այսինքն որպես սոցիալական գործունեության ձևերը կանոնավորող համակարգ, երբ վերլուծության միավոր հանդես են գալիս աշխատանքի հասարակական բաժանման առանձին ճյուղեր և սոցիալական հաստատություններ: Երկրորդ, կազմակերպական, այսինքն որպես կապերի համակարգ, երբ առաջանում են տվյալ սոցիալական սիստեմին բնորոշ սոցիալական խմբերի տարբեր տիպեր, վերլուծման միավոր հանդես են գալիս կոլեկտիվները, տարբեր կազմակերպություններ և նրանց կառուցվածքային տարրերը, երրորդ. սոցիալական գործողության կողմնորոշման որոշակի համակարգ, վերլուծման միավոր են հանդիսանում սոցիալական գործողության տարրերը (նպատակները և միջոցները, մոտիվները և ազդակները, նպրճները և նմուշները, ծրագրերը և ենթածրագրերը)»<sup>3</sup>: Անհրաժեշտ է նշել, որ պրոֆ. Լևադայի նշած այս երեք մոտեցումները հանդիսանում են հասարակության սոցիալական կառուցվածքի հատվածքները, լայն առումով, որոնք լրացնում են մեկը մյուսին և հնարավորություն են ստեղծում տեսական և փաստական վերլուծության համար: Սակայն սոցիալական կառուցվածք հասկացությունը ներկա դեպքում մենք օգտագործում ենք նեղ առումով, որպես գիտական կոմունիզմի կատեգորիա, որի տակ հասկացվում է աշխատանքի բաժանման հիման վրա սոցիալիստական հասարակության մեջ գոյություն ունեցող դասակարգերի, սոցիալական խմբերի ամբողջությունը, նրանց ներքին կառուցվածքը և փոխհարաբերությունները: Ընդհանրապես սոցիալիստական հասարակության մեջ գոյություն ունի սոցիալական ընդհանրությունների երեք ձև. սոցիալ-դասակարգային, որի մեջ մտնում են հասարակական դասակարգերը, սոցիալական խմբերը և շերտերը, որոնց շերտավորման հիմքը կազմում է աշխատանքի հասարակական բաժանումը, սոցիալ-ժողովրդագրական, որը արտահայտում է հասարակության շերտավորվածությունը ըստ ընտանիքների, սեռերի և սերունդների, սոցիալ-էթնիկական ընդհանրություն, որն արտահայտում է հասարակության շերտավորվածությունը նախ ըստ տոհմերի, ցեղերի, այնուհետև ըստ ժողովուրդների և ազգերի:

<sup>2</sup> Կ. Մարքս և Ֆ. էնգելս, Ընտիր երկեր, 4. 1, էջ 708—709:

<sup>3</sup> Сб'у Философская энциклопедия, т. 5, М., 1970, էջ 112.

Հասարակության այս շերտավորվածության մեջ կենտրոնական տեղ են գրավում հասարակական դասակարգերը, որոնք սոցիալական կառուցվածքի գլխավոր տարրերն են: Սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքը տեսականորեն լայն առումով կարող է ընդգրկել ազգաբնակչության սոցիալական կազմը և սոցիալական հարաբերությունները: Որոշ հեղինակների կարծիքով հասարակության սոցիալական կառուցվածքի մեջ մտնում է բնակչության միայն այն մասը, որը զբաղված է հասարակական տրնտեսության մեջ, իսկ ոմանք էլ սոցիալական կառուցվածքի մեջ մտնում են ամբողջ աշխատունակ բնակչությանը: Օրինակ, ըստ Կոստլապովի սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի սոցիալական սահմանները համընկնում են հասարակության կառուցվածքի հետ: Ըստ նրա սոցիալ-դասակարգային կառուցվածքը, ի տարբերություն սեռատարիքային և ազգային-ոսասայական կառուցվածքների, որոնք կազմավորվել են բնական, կենսաբանական ճանապարհով, առաջանում է նյութական հիմքի վրա պատմական ճանապարհով, աշխատանքի հասարակական բաժանման հետևանքով: «Սոցիալական կառուցվածքը, — գրում է նա, — աշխատանքի բաժանման օրինաչափ արտացոլումն է հասարակական կյանքի և արտադրության մասնագիտացված տարբեր ճյուղերի պատկանող մարդկանց խմբերի նկարագրի մեջ, այդ խմբերի միմյանց նկատմամբ ունեցած հարաբերություններում: Ըստ էնգելսի՝ այնպես ինչպես աշխատանքի զարգացման պատմության մեջ մարքսիզմը գտավ հասարակության ամբողջ պատմության ըմբռնման բանալին, այդպես էլ աշխատանքի բաժանման պատմության մեջ մարքսիստները տեսնում են սոցիալական հարաբերությունների բացատրման բանալին»<sup>4</sup>:

Ընդհանուր առմամբ ճիշտ գնահատելով սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքը, կարծում ենք, որ հեղինակը մասամբ ճիշտ է, երբ սոցիալական կառուցվածքի սահմանները նույնացնում է հասարակության կառուցվածքի սահմանների հետ: Այսպիսի անճշտության մեթոդաբանական հիմքն այն է, որ սոցիալականը տնտեսականից, քաղաքականից և գաղափարականից չի մասնահանվում, շնայած իր մեջ այն ներառնում է այդ բոլորը: Սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի սահմանները ճիշտ ըմբռնելու համար կարևոր նշանակություն ունի սոցիալական հասկացության պարզաբանման հարցը: Անհրաժեշտ է ընդգծել, որ սոցիալական հասկացության կոնկրետ բնորոշումը բավականին դժվար է, գիտական գրականության մեջ կան տարբեր մեկնաբանումներ, հեղինակների մի մասը սոցիալականը հանգեցնում է հասարակականի, իսկ մյուս մասը դասակարգայինի և այլն: Ընդհանրապես սոցիալականը դիտելով որպես հասարակականի հիմնական մասը, պետք է նշել, որ շատ հաճախ դժվարություն է առաջ գալիս սոցիալականի և դասակարգայինի հարաբերակցության հարցը պարզաբանելիս: Ճիշտ է, սոցիալական և դասակարգային հասկացությունները շատ մոտ են, սակայն նրանց միջև գոյություն ունեն որոշակի տարբերություններ: Սոցիալականը ավելի լայն հասկացություն է, այն ընդգրկում է երևույթի վերլուծման և՛ խորությունը, և՛ լայնությունը, մինչդեռ դասակարգայինն ընդգրկում է ավելի շատ վերլուծման խորությունը: Բացի դրանից դասակարգայինը նախ տնտեսական, նոր միայն սոցիալական քաղաքական, գաղափարական հասկացություն է, ուստի դասակարգային տարբերությունները ոչ միշտ

<sup>4</sup> Р. И. Косолапов. Социализм, к вопросам теории, М., 1973, с. 384.

են սոցիալական տարբերությունների հետ համընկնում: Առաջինը կապված է արտադրամիջոցների սեփականատիրական հարաբերությունների հետ, երկրորդը՝ արտադրամիջոցների հասարակական հարաբերությունների հետ, այսինքն երկրորդն ավելի լայն է, քան առաջինը: Դասակարգային հարաբերությունները բխում են տվյալ ֆորմացիայի արտադրական, սեփականատիրական հարաբերություններից, միաժամանակ դասակարգային հասարակության մեջ արտադրահարաբերությունները դասակարգային բնույթ են կրում: Մեքոդարանական տեսակետից սոցիալական հարաբերությունները, ի տարբերություն մյուս կարգի հարաբերությունների, պոսկտիկորեն ընդգրկում են հասարակական կյանքի բոլոր բնագավառները, տնտեսական, ընտանեկան, կենցաղային, ազգային, ֆաղաֆական, գաղափարախոսական, կուլտուրական և այլն, սակայն չեն հատվում նշված հարաբերությունների հետ, այլ արտահայտում են նրանց բնույթը, սոցիալական միասնությունը, պայքարը, բարեկամությունը, համագործակցությունը և այլն: Սոցիալական հարաբերությունները մարդկանց սոցիալական ընդհանրությունների միջև հարաբերություններն են ըստ նրանց ապրելակերպի, սոցիալական դրության, որոնք դասակարգային հասարակության մեջ իրենց արտահայտությունն են գտնում մարդկանց սոցիալական անհավասարության մեջ: Հատկապես հասարակական դասակարգերի, սոցիալական խմբերի փոխհարաբերությունների բնույթով, համակարգով է պայմանավորված սոցիալական կառուցվածքի էությունը: Որոշ հեղինակներ սոցիալական հարաբերությունները դիտում են սոսկ աշխատանքային հարաբերությունների ձև և այստեղից էլ եզրակացնում են, որ իբր սոցիալական կառուցվածքը իր մեջ ընդգրկում է միայն հասարակական արտադրության մեջ աշխատողներին: Հեղինակների մի այլ խումբ սոցիալական հարաբերությունների շրջանակները լայն են վերցնում և հասարակության սոցիալական կառուցվածքի մեջ մտցնում են նաև պատանի և ավագ սերնդի մարդկանց: Կարծում ենք, սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքը տնտեսականորեն կարող է համընկնել ազգաբնակչության սոցիալական կազմի հետ, սոցիալ-ժողովրդագրական միավորը մտնում է սոցիալական կառուցվածքի մեջ, հանդիսանում է նրա կարևոր տարրը ոչ թե նրա համար, որ առանձին սոցիոլոգներ իրենց վերլուծությունների ժամանակ արդ հանգամանքը նկատի են առնում, այլ նրա համար, որ այդ նշված խմբերը կամ նրանց մեծ մասը զբաղվում են հասարակական հանրագուտ աշխատանքով և էական դեր են խաղում սոցիալական հարաբերությունների մեջ: Սակայն ազգաբնակչության սոցիալական կազմը որպես սոցիալ-ժողովրդագրական միավոր իր ծավալով ունի չի կարող համընկնել հասարակության սոցիալական կառուցվածքի հետ, որովհետև ազգաբնակչության սոցիալական կազմի մեջ մտնող որոշ խմբերի և անհատների (օրինակ՝ տնային տնտեսուհիներ, որոնք դաստիարակության հարցերով չեն զբաղվում, եկեղեցու և այլ կարգի սպասավորներ, ծերունիներ և այլն) գործունեությունը էական սոցիալական բնույթ, սոցիալական երանգ չի ըստեղծում, բացի դրանցից հասարակության սոցիալական կառուցվածքի մեջ չեն մտնում հասարակության աշխատունակ անդամները, որոնք զբաղված չեն հասարակական հանրագուտ աշխատանքով: Մեք նկատառումն ավելի հիմնավոր և ընդունելի կարելի է համարել, երբ հասարակության սոցիալական կառուցվածք հասկացությունը քննարկենք ավելի նեղ առումով, որն ընդունվում է գիտական գրականության մեջ, այսինքն՝ նկատի ունենալով հասարակական

դասակարգերը և սոցիալական յուրահատուկ խավ հանդիսացող մտավորականությունը:

Սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքը իր մեջ ընդգրկում է հարաբերականորեն կայուն հասարակական հարաբերություններ, որոնք արտադրաուժերի և արտադրահարաբերությունների զարգացման պատմական կոնկրետ արդյունք լինելով հանդերձ միաժամանակ հանդիսանում են մարդկանց պատմական գործունեության արդյունք: Հասարակության սոցիալ-դասակարգային, սոցիալ-ժողովրդագրական և սոցիալ-էթնիկական ընդհանրությունները լայն առումով մտնում են սոցիալական կառուցվածքի մեջ, որպես միմյանց հետ փոխկապակցված հասկացություններ: Սոցիալական կառուցվածքը և առանձին կոլեկտիվների կառուցվածքները հարաբերում են ինչպես առանձինը և ընդհանուրը, ուստի սոցիալական կառուցվածքի փոփոխությունը պայմանավորված է նրա հիմնական տարրերի փոփոխություններով: Սոցիալական կառուցվածքը տվյալ հասարակական-տնտեսական ֆորմացիայի մարդկանց կազմակերպության օբյեկտիվ ձև է, այն հանդիսանում է սոցիալական խմբերի, կոլեկտիվների և անհատների փոխհարաբերությունների համակարգ: Զարգացած սոցիալիզմի սոցիալական կառուցվածքի զարգացման ուղիները, օրինաչափությունները բացահայտելու, գիտական կառավարումն անշեղորեն իրագործելու, սոցիալական ու տնտեսական զարգացումը ճիշտ ըմբռնելու համար այժմ կարևոր դեր են խաղում կիրառական հետազոտությունները: Ընդհանրապես հասարակության սոցիալական կառուցվածքը որակական փոփոխություններ է կրում այն ժամանակ, երբ արտադրանդանակում, սեփականատիրական հարաբերություններում էական փոփոխություններ են կատարվում: Այս առումով սոցիալիստական հեղափոխությունը արմատապես վերափոխում է բուրժուական հասարակության սոցիալական կառուցվածքը և ստեղծում որակապես սոցիալական նոր կառուցվածք: Սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքը արտադրամիջոցների հանրային սեփականության վրա հիմնված բարեկամական դասակարգերի սոցիալական խմբերի և խավերի ամբողջությունն է, որոնց միջև փոխհարաբերությունները պայմանավորված են արտադրամիջոցների հանրային սեփականությամբ, արմատական շահերի միասնությամբ, մարքս-լենինյան գաղափարախոսությամբ և կոմունիզմի կառուցման բարձր նպատակով:

Սոցիալիստական հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքի զարգացումը կապված տնտեսական ու սոցիալական էական փոփոխությունների հետ անցել է զարգացման մի քանի փուլեր: Այս հարցում մենք համամիտ չենք Ա. Ի. Սուխարևի այն կարծիքի հետ, որ իբր զարգացած սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի ձևավորումն անցել է հետևյալ երեք էտապները, 1917 թվականից մինչև 20-ական թթ. վերջը, երկրորդ էտապը՝ 20-ական թթ. վերջից մինչև 30-ական թթ. վերջերը և երրորդը համընկնում է ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման ավարտական փուլի հետ<sup>5</sup>: Կարծում ենք նման ստորաբաժանումը ոչ ունի, ոչ ամբողջական ձևով է արտահայտում մեր հասարակության սոցիալական կառուցվածքի ձևավորման ու զարգացման դիալեկտիկական՝ կապված սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական վերափոխումների հետ, որոնք էական ներգործություն են ունեցել սո-

<sup>5</sup> См. А. И. Сухарев. Закономерности развития и проблемы регулирования социальной структуры социалистического общества. Автореферат д/д, М., 1973, էջ 14:

ցիալական կառուցվածքի ձևավորման ու զարգացման համար: Ուստի անհր-  
րաժեշտ է ընդգծել, որ եթե վերցնենք միայն սոցիալիստական հասարակու-  
թյան սոցիալական կառուցվածքի ձևավորումը, ապա պետք է նշել, որ այն  
համընկնում է սոցիալիզմի հիմքերի կառուցման, այսինքն կապիտալիզմից  
սոցիալիզմին անցման շրջանի հետ, որը իր հերթին կարելի է բաժանել ենթա-  
շրջանների, ինչպես այն հաճախ է արվում գիտական գրականության մեջ, կապ-  
ված ինդուստրացման, կոլեկտիվացման և կուլտուրական հեղափոխության  
հետ: Սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի ձևավո-  
րումն ու զարգացումը մեր երկրում հիմնականում կարելի է բաժանել երեք  
էտապի: Առաջին էտապը ընդգրկում է կապիտալիզմից սոցիալիզմին անցման  
շրջանը: Այդ ժամանակաշրջանում վերացվեցին շահագործող դասակարգերը,  
բանվոր դասակարգի և գյուղացիության սոցիալական նկարագիրը էապես փոխ-  
վեց, աստիճանաբար սկսեց ձևավորվել սոցիալիստական մտավորականու-  
թյունը, որակական և քանակական փոփոխություններ տեղի ունեցան քաղա-  
քային և գյուղական բնակչության կազմում: Կապիտալիզմից սոցիալիզմին  
անցման շրջանում պրոլետարիատը դարձավ սոցիալիստական բանվոր դասա-  
կարգ, աստիճանաբար ստեղծվեց դասակարգային հակամարտությունից զերծ  
դասակարգերի, սոցիալական խմբերի և խավերի սոցիալ-տնտեսական և սո-  
ցիալ-քաղաքական միասնությունը: Եթե 1928 թվ. շահագործող դասակարգերը՝  
բուրժուազիան, կալվածատերերը և կուլակները կազմում էին 4,6 տոկոս, ապա  
1939 թ. նրանք լրիվ լիկվիդացվել էին, իսկ բանվորներն ու ծառայողները կազ-  
մում էին 50 տոկոս, կոլտնտեսային գյուղացիությունը՝ 47,2 տոկոս, շկոտպե-  
րացված մեծատնտես գյուղացիները՝ 2,8 տոկոս<sup>6</sup>: Այս պրոցեսի ընդհանուր  
օրինաչափությունը դասակարգային պայթյալն էր: Այնուհետև անցել է զար-  
գացման երկրորդ փուլը, որն ընդգրկում է 30-ական թթ. երկրորդ կեսերից  
մինչև 50-ական թվականները, երբ սոցիալիզմը հաղթանակեց հասարակա-  
կան կյանքի բոլոր բնագավառներում և դուրս եկավ մեր երկրի շրջանակնե-  
րից: Նշված ժամանակաշրջանում սոցիալական կառուցվածքում տեղի ունե-  
ցան էական, որակական փոփոխություններ, ավելի ամրապնդվեց դասակար-  
գերի, սոցիալական խմբերի, սովետական ժողովրդի սոցիալ-քաղաքական  
միասնությունը: Սկսած 60-ական թվականներից սոցիալիստական հասարա-  
կությունը թևակոխեց տնտեսական ու սոցիալական զարգացման նոր փուլ,  
դա զարգացած սոցիալիզմի փուլն է, երբ էլ ավելի ամրապնդվեց բանվոր դա-  
սակարգի առաջատար դերը, տեղի ունեցավ մտավորականության աճի տեմ-  
պերի մեծացում, գյուղացիության թվի կրճատում, ընթացավ բանվոր դասա-  
կարգի, գյուղացիության և մտավորականության բուռն մերձեցման պրոցես,  
որը տանում է դեպի անդասակարգ հասարակության կառուցում:

ՄՄԿԿ XXVI համագումարում Լ. Ի. Բրեժնևը նշեց. «Գնահատելով վերջին  
տասնամյակներում մեր հասարակության զարգացման փորձը, կարծում եմ  
կարելի է ենթադրել, որ հասարակության անդասակարգ կառուցվածքի կազ-  
մավորումը գոյավորապես և հիմնականում տեղի կունենա հասուն սոցիալիզ-  
մի պատմական շրջանակներում: Այդ պրոցեսի առաջատար ուժը, Մարքսի  
բառերով ասած, նրա «սոցիալական բանականությունն ու սոցիալական սիր-  
տը» եղել և մնում է ժամանակակից բանվոր դասակարգը<sup>7</sup>: Այս տեսական

<sup>6</sup> Տե՛ս Народное хозяйство СССР. 1922—1972, М., 1972, էջ 35:

<sup>7</sup> «ՄՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 86:

կարևոր հետևություններ բխում է սոցիալիզմի կառուցման փորձից: Սոցիալիստական հասարակության զարգացումը միաժամանակ նշանակում է նաև նրա սոցիալական կառուցվածքի զարգացումը, այսինքն զարգացած սոցիալիզմի սոցիալական կառուցվածքի կատարելագործումը տանում է դեպի դասակարգերի ոչնչացում:

Սոցիալիստական հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքի գլխավոր տարրերն են՝ բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և ժողովրդական մտավորականությունը: Մարքսիստական սոցիոլոգիայում բանավեճ է գնում այն մասին, թե դասակարգերի լենինյան բնորոշումը տարածվո՞ւմ է արդյոք սոցիալիստական դասակարգերի վրա, թե՞ ոչ: Նման հարցադրումը առաջ է բերում հետևյալ պրոբլեմները. նախ՝ դասակարգերի լենինյան բնորոշումը, եթե վերցնենք իր բոլոր ատրիբուտներով, ապա սոցիալիստական հասարակությունը բառիս իսկական առումով դասակարգային համարվել չի կարող, որովհետև սոցիալիզմի ժամանակ չկա մարդկանց մի խումբ, որը յուրացնում է մյուսի աշխատանքը: Սակայն նման հարցադրումը նշանակում է, որ խոսքը վերաբերում է հակամարտ դասակարգերին, որոնք իրոք սոցիալիզմի ժամանակ չկան, ուստի և «սոցիալիզմը անդասակարգ հասարակություն է» արտահայտությունը կարելի է օգտագործել սուկ շահագործողական հարաբերությունների վերացման առումով: Այս դեպքում, սակայն, հաշվի չի առնվում սոցիալական պրոցեսների բարդությունն ու տևականությունը զարգացման մի էտապից մյուսին անցնելու ժամանակ: Հեղինակների մի խումբ էլ այն կարծիքին է, որ դասակարգերի լենինյան բնորոշումը ընդունելի է սոցիալիզմի ժամանակ, բացի այն մասից, որ դասակարգերը մարդկանց այնպիսի խմբեր են, որոնցից մեկը կարող է յուրացնել մյուսի աշխատանքը: Նման մտեցման ժամանակ անտեսվում է լենինյան բնորոշումը ամբողջության վերցրած և տրամաբանորեն կարո՞ղ է հարց առաջանալ, թե ինչո՞ւ սոցիալիզմի ժամանակ գոյություն ունեն դասակարգեր, սոցիալական խմբեր, որոնց վերացման համար անհրաժեշտ է երկար ժամանակ: Վ. Ի. Լենինը բազմիցս ընդգծել է, որ ճիշտ ստրատեգիա և տակտիկա մշակելու համար անհրաժեշտ է օբյեկտիվորեն հաշվի առնել տվյալ հասարակության դասակարգային փոխհարաբերությունների զարգացումը. «Ըստ որում, — գրում է նա, — բոլոր դասակարգերը և բոլոր երկրները դիտվում են ոչ թե իրենց ստատիկ, այլ դինամիկ վիճակում, այսինքն՝ ոչ թե անշարժ վիճակում, այլ շարժման մեջ (որի զրեներները բխում են յուրաքանչյուր դասակարգի գոյության տնտեսական պայմաններից): Շարժումն իր հերթին դիտվում է ոչ միայն անցյալի տեսակետից, այլ և ապագայի տեսակետից և այն էլ ոչ թե միայն դանդաղ փոփոխություններ տեսնող «էվոլյուցիոնիստների» գոեհիկ ըմբռնումով, այլ դիալեկտիկորեն»<sup>8</sup>: Հետևաբար սոցիալիստական հասարակությունում դասակարգային կառուցվածքի զարգացման պատմական առանձնահատկությունները ճիշտ հասկանալու համար կարևոր նշանակություն ունի դասակարգերը դիտել պատմական տեսանկյունով, որոնք առաջացել են մասնավոր սեփականության և դասակարգային հակամարտության պայմաններում, սոցիալիստական արտադրանական առաջացումով էական փոփոխություններ են կրել և այժմ գտնվում են այնպիսի աստիճանի վրա, երբ օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններ են ստեղծվել դասակարգային տարբերությունների վերացման

<sup>8</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 26, էջ 90:

Համար: Դասակարգերի մարքս-լենինյան բնորոշումը իր բոլոր ատրիբուտներով ընդունելի է սոցիալիստական հասարակության դասակարգային կառուցվածքի վերլուծության համար, հատկապես նրա շորս հատկանիշները, հասարակական արտադրության պատմականորեն որոշակի համակարգում գրաված տեղը, արտադրության միջոցների նկատմամբ ունեցած վերաբերմունքը (որպես դասակարգերի առաջացող հիմնական հատկանիշ), աշխատանքի հասարակական կազմակերպման մեջ ունեցած դերը, հասարակական հարստությունից ստացման եղանակներն ու շահերը<sup>9</sup>, Այդ բնորոշումը արտահայտում է պատմական կոնկրետ միասնությունն դասակարգերի ձևավորման զարգացման և անհետացման առումով: Դասակարգերի լենինյան բնորոշումը բացահայտում է սոցիալիզմի պատմական տեղը դասակարգային կառուցվածքի առումով, մի հասարակություն, որտեղ արտադրամիջոցների մասնավոր սեփականությունն վերացումով վերացել է մարդու կողմից մարդու շահագործումի տնտեսական հիմքը: Չնայած դասակարգերի լենինյան հայտնի սահմանման մեջ նշվում է, որ «դասակարգերը մարդկանց այնպիսի խմբեր են, որոնցից մեկը կարող է յուրացնել մյուսի աշխատանքը հասարակական տնտեսության որոշ կացութաձևի մեջ իրենց տարբերության շնորհիվ», սակայն այս սահմանումից նախ երևում է, որ յուրացումը, շահագործումը դիտվում է որպես հնարավորություն («կարող է»), իսկ ամեն մի հնարավորությունն չէ, որ իրականություն է դառնում և երկրորդը Վ. Ի. Լենինը անշուշտ այստեղ նկատի ունի շահագործողական դասակարգերը: Այսպիսով, դասակարգերի լենինյան բնորոշումը լրիվ կերպով ընդունելի է սոցիալիստական հասարակության դասակարգային վերլուծության համար, սոցիալիզմը դասակարգային հասարակություն է, որը սակայն արմատապես տարբերվում է բուրժուական հասարակության հակամարտ դասակարգային կառուցվածքից:

Սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի զարգացումը կենտրոնական տեղ է գրավում ՄՄԿԿ և սովետական կառավարության սոցիալական քաղաքականության բնագավառում: Մեր հասարակության զարգացումը, նրա առաջընթացը դեպի կոմունիստական հասարակության բարձր փուլը, պահանջում է նշված բնագավառում գիտականորեն մշակված քաղաքականություն վարել: «Հասարակության ու իշխանության սոցիալական կառուցվածքը, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ, բնորոշվում է այնպիսի փոփոխություններով, որոնք եթե չպարզաբանվեն, անկարելի կլինի մի քաջ անգամ անել հասարակական գործունեության ցանկացած բնագավառում: Այդ փոփոխությունները պարզաբանելուց է կախված հեռանկարների հարցը, հասկանալով դրա տակ, իհարկե, ոչ թե դատարկ գուշակումներ այն մասին, ինչ ոչ ոք չգիտե, այլ տնտեսական և քաղաքական զարգացման հիմնական տենդենցները, այն տենդենցները, որոնց հավասարազորը որոշում է երկրի ամենամոտ ապագան, այն տենդենցները, որոնք որոշում են յուրաքանչյուր գիտակից հասարակական գործչի անելիքները, ուղղությունը և գործունեության բնույթը»<sup>10</sup>: Ելնելով լենինյան մեթոդաբանական այս դրույթից ՄՄԿԿ-ի սոցիալական քաղաքականությունը սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի կատարելագործման ուղղությամբ բնորոշվում է մի կողմից՝ բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության քանակական և որակա-

<sup>9</sup> Տե՛ս Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 39, էջ 17:

<sup>10</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 20, էջ 228:



կան փոփոխութիւններով, մյուս կողմից՝ նրանց բազմակողմանի մերձեցման աճով, նրանց միջև սոցիալ-դասակարգային տարբերութիւնների վերացումով: Նշված երկու կողմերն էլ դիալեկտիկական միասնութեան մեջ են գտնվում, որոնց զարգացումը տանում է դեպի անդասակարգ կոմունիստական հասարակութեան կառուցում: Բանվոր դասակարգի ղեկավար դերի ապահովումը ՍՄԿԿ սոցիալական քաղաքականութեան գլխավոր ուղղութիւններից մեկն է, այդ կապակցութեամբ ՍՄԿԿ XXVI համագումարում նշվեց, որ զարգացած սոցիալիստական հասարակարգում «բարձրանում է բանվոր դասակարգի դերը հասարակական կյանքում: Աճում է նրա թիվը: Ներկայումս երկրում կա շուրջ 80 միլիոն բանվոր՝ զբաղված բնակչութեան երկու երրորդը: Նշանակում է բանվոր դասակարգը մեզանում դարձել է ոչ թե պարզապէս ամենաբազմաքանակ դասակարգը, ալլև աշխատավոր ժողովրդի մեծամասնութիւնը»<sup>11</sup>: Հիմք ընդունելով դասակարգերի լենինյան հայտնի սահմանումը ՍՄԿԿ-ն իր սոցիալական քաղաքականութեան մեջ ընդգծում է այն հիմնական ուղիները, որոնք տանում են դասակարգերի և սոցիալական խմբերի մերձեցմանն ու սոցիալական միատարրութեան հասնելուն: Այդ ուղիներից գլխավորը սոցիալիստական սեփականութեան երկու ձևերի մերձեցման հիման վրա արտադրութեան միջոցների նկատմամբ միատեսակ վերաբերմունքի ստեղծումն է: Երբ մենք արտադրամիջոցների սեփականութեան ձևը դիտում ենք որպէս հասարակութեան դասակարգային բաժանման շափանիշ, ապա անհրաժեշտ է նկատի ունենալ, նախ, որ արտադրութեան միջոցների նկատմամբ ունեցած վերաբերմունքը չնայած դասակարգերի բնորոշման գլխավոր, սակայն ոչ միակ շափանիշն է և երկրորդ, որ սեփականութեան հատկացութեան մեջ շափտք է նույնացնել նրա իրավական ասպեկտը սոցիալ-տնտեսական ասպեկտների հետ: Միայն սեփականութեան ձևը դիտելով որպէս դասակարգային շերտավորման շափանիշ՝ մի քանի հեղինակներ հանգել են այն ոչ ճիշտ հետևութեան, որ նրանք բանվոր դասակարգի կազմի մեջ մտցրել են տեխնիկական աշխատողներին և մտավորականութեան մի մասին: Այսպիսի մտտեցումը հիմնավորված չէ հետևյալ պատճառներով, նախ, որ այն օբյեկտիվորեն չի արտահայտում սոցիալիստական հասարակութեան սոցիալ-դասակարգային կառուցվածքը, կասկածանքի տուկ է դրվում բանվոր դասակարգի առաջատար դերը, թերագնահատվում է բանվոր դասակարգի և մտավորականութեան դաշինքը, ապակողմնորոշում է սոցիալիստական շինարարութեան պրակտիկան և, վերջապէս, թուլացնում է մեր դիրքերը բուրժուական և ռեիզիոնիստական տեսաբանների դեմ մղվող պայքարում: Ընդհանրապէս ընդունված է այն տեսակետը, որի համաձայն բանվոր դասակարգի կամ գյուղացիութեան շարքերն են դասվում նրանք, ովքեր անմիջապէս շփվում են աշխատանքի առարկաների, գործիքների հետ և նյութական բարիքներ են ստեղծում անգամ, եթե բարձրագույն կրթութիւն ունեն: Իսկ այն աշխատողները, ովքեր մասնակցում են հասարակական բարիքի ստեղծմանը արտադրութեանը և մարդկանց կառավարման ճանապարհով պատկանում են մտավորականութեան շարքին, նրանք հատուկ բարձր որակավորում ունեցող մտավոր աշխատանքով զբաղվող մարդիկ են: Անհրաժեշտ է նաև ավելացնել, որ քանի դեռ աշխատանքը սոցիալապէս միասեռ չէ, այնքան ժամանակ գոյութիւն կունենա աշխատանքի քաժանմամբ սոցիալական ասպեկտը, որը դասակարգերի գոյութեան տնտեսական հիմքն է, ինչպէս էլ որ ուզում է

<sup>11</sup> «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», Եր., էջ 84:

փոխվի սեփականության իրավաբանական ձևը: Ուստի կարծում ենք ճիշտ չեն այն հեղինակները, ովքեր գտնում են թե իրր դասակարգերը ավելի շուտ կվերանան քան կհասնենք հասարակության սոցիալական միատարրության:

Սոցիալական միատարրության հասնելու մյուս ուղիներին մեկն էլ ԳՏՀ ազդեցության շնորհիվ աշխատանքի բնույթի և բովանդակության փոփոխությունն է, մտավոր և ֆիզիկական աշխատանքի, գյուղի և քաղաքի միջև էական տարբերությունների վերացումը: Աշխատանքի բնույթի և բովանդակության փոփոխման մասին մեթոդաբանական առումով մեր գրականության մեջ դեռևս միասնական կարծիք չկա, այս երկու հասկացությունները կամ նույնացնում են, կամ փոխում են մեկը մյուսով, կամ էլ անջատում են իրարից: Հեղինակներին մեծ մասը, սակայն այն կարծիքին է, որ աշխատանքի բնույթը ընդգրկում է նրա սոցիալ-տնտեսական բնութագիրը, այն ցույց է տալիս աշխատանքի բաժանման բնագավառում եղած հիմնական տարբերությունը, իսկ աշխատանքի բովանդակությունը ավելի նեղ հասկացություն է, որն ընդգրկում է աշխատանքային օպերացիաների առանձնահատկությունները: Մեր կարծիքով այդ երկու հասկացություններն էլ արտահայտում են աշխատանքի միասնական պրոցեսը, որը սահմանում կամ արձանագրում է աշխատանքի սեռի և ձևի միջև եղած որակական տարբերությունները: Հետևաբար սոցիալական կառուցվածքի զարգացումը ուսումնասիրելու համար աշխատանքի «բնույթ» և «բովանդակություն» հասկացությունները պետք է միասնության մեջ վերցնել, որպես համազոր հասկացություններ: Դասակարգերի լենինյան բնորոշման մեջ առաջնությունը տալով արտադրության միջոցների նկատմամբ ունեցած վերաբերմունքին, որպես դասակարգերի բնորոշման գլխավոր հատկանիշի, միաժամանակ չպետք է թերագնահատել մյուս հատկանիշները: Մասնավորապես խոսքը վերաբերում է աշխատանքի հասարակական կաղամկերպման մեջ ունեցած դերին: Այս հանգամանքը անհրաժեշտ է նշել այն առումով, որ աշխատանքի բնույթն ու բովանդակությունն անմիջական կապ ունեն աշխատանքի հասարակական կաղամկերպման մեջ նրանց դերի հետ: Աշխատանքի բնույթի և բովանդակության տարբերությունները իրենց արտահայտությունն են գրտնում դասակարգերի և նրանց ներքին շերտավորման մեջ, այսինքն նրանք ունեն և՛ դասակարգային, և՛ մասնագիտական բնույթ: Դասակարգային և ներդասակարգային հասկացությունները ևս իրարից անջատել չի կարելի, նրանց հիմքն ընդհանուր է՝ աշխատանքի հասարակական բաժանումը: Սակայն դասակարգայինի առաջատար դերը քաջատրվում է նրանով, որ տվյալ դասակարգերի ներկայացուցիչը, ինչպիսի խմբի մեջ էլ մտնի, այնուամենայնիվ, հանդիսանում է առաջին հերթին դասակարգային հարաբերությունների, դասակարգային շահերի կրողը:

Նկատի ունենալով սոցիալ-դասակարգային տարբերությունների հարթահարման հեռանկարները, որոշ հեղինակներ նրանց գոյությունը կապում են միայն սոցիալիստական սեփականության ձևերի զարգացման հետ, այսինքն լենինյան բնորոշումից վերցնում են միայն մի հատկանիշը, ըստ որի ենթադրվում է, որ իրր հնարավոր է հասնել առդասակարգ, բայց սոցիալական ոչ միատարր հասարակության: Սակայն ելնելով սոցիալիզմի կառուցման պրակտիկայից, պետք է նշել, որ սոցիալիստական սեփականության ձևերի մերձեցումը իր բոլոր մանրամասներով անպայման նպաստում է սոցիալական խրմբերի աշխատանքի բնույթի և բովանդակության փոփոխմանը: Սեփականության երկու ձևերի մերձեցումը ի հաշիվ արտադրության համակենտրոնաց-

ման, մասնագիտացման, կոոպերացման, հիմնական արտադրական ֆոնդերի հանրաբաժանման, արտադրական պրոցեսների ավտոմատացման՝ մեծապես նպաստում է բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և ժողովրդական մտավորականության աշխատանքի բնույթի, բովանդակության փոփոխությանը, դասակարգային և ներդասակարգային տարբերությունների աստիճանական վերացմանը: Քննադատելով բուրժուական տնտեսագետ, իդեալիստ փիլիսոփա Ս. Ն. Բուլգակովին՝ Վ. Ի. Լենինը նշում էր, որ ճիշտ չէ «արհեստների տարբերությունը շփոթել դասակարգերի տարբերությունների հետ, կենցաղային տարբերությունները շփոթել հասարակական արտադրության ամբողջ համակարգի մեջ դասակարգերի ունեցած տարբեր վիճակի հետ...»<sup>12</sup>: Բայց միաժամանակ Լենինյան այս դրույթից չի հետևում, որ դասակարգային և մասնագիտական պատկանելության միջև կապ չկա, անհրաժեշտ է նշել, որ գոյություն ունի անմիջական կապ աշխատանքը դասակարգային և մասնագիտական բաժանման հասարակության սոցիալական և պրոֆեսիոնալ կառուցվածքի միջև: Մենք համամիտ ենք Մ. Ն. Ռուտկևիչի այն կարծիքի հետ, որ «...մտավորականության տարբերությունը բանվորներից և կոլտնտեսականներից ըստ աշխատանքի բնույթի սոցիալական տարբերություն է, իսկ մտավորականության ներսում եղած տարբերությունները (ուսուցիչներ, բժիշկներ, ինժեներներ) մասամբ սոցիալական է (աշխատավարձի միջին չափի միջև եղած տարբերությունները և այլն), դրա հետ միասին նաև մասնագիտական է, այն դեպքում, երբ այդ ջոկատների միջև եղած տարբերությունները ըստ աշխատանքի բովանդակության ամբողջապես վերաբերում է աշխատանքի մասնագիտական բաժանման բնագավառին»<sup>13</sup>: Հետևաբար աշխատանքի որակական, մասնագիտական, ինչպես և տեխնիկական մասնատումը միշտ էլ գոյություն կունենա, սակայն, աստիճանաբար մոտենալով կոմունիստական հասարակության բարձր փուլին, նրանք կկորցնեն իրենց սոցիալական բնույթը, այսինքն՝ կվերանա աշխատանքի հասարակական բաժանման սոցիալական ասպեկտը, որը սոցիալական միատարրության հասնելու կարևոր ուղիներից մեկն է:

Սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի զարգացման կարևոր ուղիներից մեկն էլ բաշխման բնագավառում եղած տարբերությունների վերացումն է: Գիտական կոմունիզմի հիմնադիրները, նկատի ունենալով կոմունիստական հասարակության առաջին փուլը, նշել են, որ բաշխման բնագավառում եղած թերությունները դեռևս չեն վերանում, ոչ ըստ աշխատանքի քանակի և որակի բաշխումը բուրժուական իրավունք է, որովհետև այն «...միևնույն մասշտաբի գործադրումն է սոցիալական տարբեր վիճակում գտնվող մարդկանց նկատմամբ և, որ «այդ անհավասարությունը շարունակվում է իշխել, քանի որ պրոդուկտներն «ըստ աշխատանքի են բաժանվում»<sup>14</sup>: Կ. Մարքսը իր հանձարեղ «Գոթայի ծրագրի քննադատության» մեջ սովել է այդ անհավասարության վերացման և կոմունիստական հասարակության բարձր փուլին հասնելու հատուկ բնութագիրը. «Կոմունիստական հասարակության բարձրագույն փուլում, երբ կշքանա մարդուն ստրկացնող հպատակեցումը նրա

<sup>12</sup> Տե՛ս Վ. Ի. Լենին, *Նժժ*, հ. 5, էջ 239:

<sup>13</sup> Տե՛ս Մ. Ն. Րուտկևիչ, *Сближение классов и социальных групп на этапе развитого социализма в СССР*, М., 1976, էջ 9:

<sup>14</sup> Վ. Ի. Լենին, *Նժժ*, հ. 33, էջ 118—119:

աշխատանքի բաժանմանը, երբ դրա հետ միասին, կանհետաձևա մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակադրությունը, երբ աշխատանքը կդադարի լուկ ապրուստի միջոց լինելուց, այլ ինքը կդառնա կյանքի առաջին պահանջ, երբ անհատների բազմակողմանի զարգացման հետ միասին կաճեն նաև արտադրողական ուժերը և լիակատար կցայտեն հասարակական հարստության բուրյադրյուրները, աչն ժամանակ միայն կարելի կլինի լիովին հաղթահարել բուրժուական իրավունքի նեղ հորիզոնը և հասարակությունը կկարողանա իր դրոշակի վրա գրել. Յուրաքանչյուրն՝ ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա պահանջմունքների»<sup>15</sup>: Զարգացած սոցիալիստական հասարակության մեջ բաշխման համակարգի կատարելագործումը, այդ բնագավառում սոցիալ-դասակարգային տարբերությունների վերացումը հիմնականում ընթանում է ըստ աշխատանքի բաշխման սոցիալիստական սկզբունքի կատարելագործման, սպառման հանրային ֆոնդերի աճի և դրանց հիման վրա դասակարգերի սոցիալական խմբերի եկամուտների մակարդակի աստիճանական մերձեցման ուղղությամբ: Այս կապակցությամբ ՍՄԿԿ XXVI համագումարը մշակեց միջոցառումների մի ամբողջ կոմպլեքս, որտեղ նկատի է առնվում սպառման հանրային ֆոնդերը ազգային եկամտի մեջ 1985 թ. հասցնել 77,3 տոկոսի, 1980 թ. 75,3 տոկոսի փոխարեն, 11-րդ հնգամյակում աշխատավարձի բարձրացման և բնակչությանը տրվող մյուս վճարումների համար հատկացնել ավելի քան 16 մլրդ ռուբլի, բնակչության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտները ավելացնել 16—18 տոկոսով, բանվորների և ծառայողների ամսական միջին աշխատավարձը 13—16 տոկոսով, կուլտեսասականներինը՝ 20—22 տոկոսով և այլն<sup>16</sup>: ՍՄՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման հիմնական ուղղություններում նախատեսված սոցիալ-տնտեսական, կուլտուր-կենցաղային ամբողջ միջոցառումների իրականացումը մի հսկայական քայլ է դեպի սոցիալական միատարրության հասարակության զարգացումը անշեղորեն ապահովելու ուղղությամբ:

Սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի զարգացման ուղիներից է հասարակության հոգևոր առաջընթացը, կուլտուրայի բնագավառում դասակարգերի, սոցիալական խմբերի միջև տարբերությունների վերացումը, նրանց մերձեցումը և կուլտուր-տեխնիկական մակարդակների միջև տարբերությունների աստիճանական վերացումը: Բանվոր դասակարգը, կուլտուրնտեսային գյուղացիությունն ու ժողովրդական մտավորականությունը հանդիսանում են սոցիալիստական հասարակության հոգևոր առաջընթացի կրողները, զարգացած սոցիալիզմի պայմաններում էապես փոխվել է նրանց գաղափարաբաղաճական ու հոգևոր նկարագիրը: Այս ուղղությամբ մեր երկրում հսկայական աշխատանք է տարվում, կատարելագործվում է ժողովրդական կրթության սոցիալիստական համակարգը, կուլտուր-լուսավորչական հաստատությունների աշխատանքը, կինոն, ռադիոն և հեռուստատեսությունը: «Հետեվաբար դասակարգերի ոչնչացումը, Ֆ. էնգելսի խոսքերով ասած, ենթադրում է արտադրության զարգացման այնպիսի քարձր աստիճան, երբ առանձին հասարակական դասակարգերի կողմից արտադրության միջոցների ու արդյունքների յուրացումը, իսկ դրա հետ միասին նաև քաղաքական տիրապետության, կրթության և հոգևոր ղեկավարության մենաշնորհը ոչ միայն ավելորդ է դառ-

<sup>15</sup> Կ. Մարևս և Ֆ. էնգելս, Ընտիր երկեր, հ. 3, եր., 1978, էջ 17:

<sup>16</sup> Տե՛ս «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 72, 168, 169 և այլն:

նում, այլև խոչընդոտ է հանդիսանում տնտեսական քաղաքական ու մտավոր զարգացման համար»<sup>17</sup>:

Սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի զարգացման ուղղություններից մեկն էլ հասարակության սոցիալական միասնության ամրապնդումն է, որն արտահայտվում է տնտեսական քաղաքական և հոգևոր բնագավառում: Սոցիալ-տնտեսական միասնությունը կազմում է դասակարգերի, սոցիալական խմբերի և ամբողջ սովետական ժողովրդի միասնության, նրանց մերձեցման հիմքերի հիմքը, որովհետև նրանց միասնության ակունքները պայմանավորված են արտադրության եղանակի, սեփականատիրական հարաբերությունների արմատական փոփոխություններով: Սոցիալիստական հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքի զարգացման դիալեկտիկական օրինաչափություններից մեկն էլ նրա սոցիալ-քաղաքական ու գաղափարական, բարոյական միասնության ամրապնդումն է, որն արտահայտվում է դասակարգերի և սոցիալական խմբերի սոցիալական բնահանուր գծերի զարգացման ու խորացման մեջ: ՍՍՀՄ կազմավորման 60-րդ տարեդարձի մասին ՍՄԿԿ ԿԿ-ի որոշման մեջ ընդգծվեց. «Արդի պայմաններում շարունակվում է սովետական հասարակության բոլոր դասակարգերի և սոցիալական խմբերի մերձեցումը, որը տանում է դեպի հասուն սոցիալիզմի սրբանշան շրջանակներում հասարակության՝ գլխավորապես և հիմնականում աճողասկարգ կառուցվածքի հաստատման»<sup>18</sup>:

Այսպիսով, սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի զարգացումը, նրա վերաճումը կոմունիստականի, պայմանավորված է սոցիալիզմը կոմունիզմի վերաճման օրինաչափությունների ամբողջ համակարգով, այդ վերաճման հիմնական օրենքը հասարակության պլանաչափ համամասնական առաջընթացն է դասակարգային շերտավորումից դեպի լիակատար սոցիալական միատարրություն:

**И. С. БАЛЯН — Социальная структура социалистического общества и пути ее развития.** — В статье анализируются границы и критерии понятия «социальная структура социалистического общества», выдвигаются методологические принципы его изучения. Одновременно указывается на необходимость разграничения — как в теоретическом, так и практическом отношении — понятия социальной структуры социалистического общества в широком и узком смысле: в первом случае это система социальных общностей людей, форм и методов их функционирования на основе сложившегося общественного разделения труда; во втором — совокупность классов и социальных групп, где классы занимают ведущее место. При уточнении границ социальной структуры социалистического общества, автор высказывает свою точку зрения относительно существующего соотношения между такими понятиями, как «социальная структура общества», «структура общества» вообще и «социальный состав населения» в частности. В статье аргументируется вывод о том, что основные пути развития социальной структуры социалистического общества и ее изменения обусловлены всей совокупностью закономерностей перерастания социализма в коммунизм. Это заключение подкрепляется материалами XXVI съезда КПСС.

<sup>17</sup> Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, *Ընտիր երկեր*, հ. 3, Եր., 1978, էջ 189:

<sup>18</sup> Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 60-րդ տարեդարձի մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1982, էջ 9—10: